

Մաշկեւոր վանքը իր 270 տարիների գոծունէութեան ընթացքում ունեցել է Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Յովհաննէս Մկրտիչ եւ Ս. Առաքելոցն Քրիստոսի անուններով եկեղեցիներ կամ խորաններ:

Մաշկեւոր անապատի առաջնորդ եպիսկոպոսները մասնակցութիւն են ունեցել Կիլիկիայում կայացած եկեղեցական մեծ ժողովներում: 1307 թուականին Սսի եկեղեցական ժողովին մասնակցել էր «Թորոս եպիսկոպոս Մաշկեւորին»-ը⁸: Նմանապէս 1342 թուականին Սսի եկեղեցական ժողովին մասնակցել էին «Գրիգոր եպս. Մաշկեւորի» եւ «Բարսեղ վարդապետ 'ի Մաշկեւորայ»⁹:

Կիլիկիայի Հայկական պետութիւնում հոգեւոր գործերի ասպարէզում իր նշանակալի դերով անուանի Մաշկեւոր վանքը դարերի ընթացքում լքուել է, եւ մոռացութեան է մատնուել նոյնիսկ վանքի տեղը: Բազմաթիւ բանասէրներ ջանացել են ճշտել Մաշկեւորի դիրքը: Սակայն, չունենալով հաստատուն փաստեր, շատերը եկել են սխալ ենթադրութիւնների: Հ. Ղ. Ալիշանը սխալմամբ վանքը տեղադրել է «Մաշկեւոր' ի սահմանս Սեւա լեռանց»¹⁰:

Ֆ. Ն. Ֆինկի եւ Լ. Գեանջեցեանի կազմած ձեռագրացուցակի ծանօթագրութիւններում Մաշկեւոր վանքի մասին տրուել է հետեւեալ ոչ ճիշտ տեղադրութիւնը. «Մաշկեւոր, վանք Կիլիկիայի եւ Հայաստանի սահմանում» ("Maschkewor,

Kloster an der Grenze von Kilikien und Armenien")¹¹:

Մաշկեւոր վանքի դիրքը որոշելու համար հարկաւոր է նախ՝ նկատի առնել 1105 թուականին նորաստեղծ Ռուբինեան իշխանութեան նեղ սահմանները, ապա՝ ի մի բերել ԺԲ-ԺԴ դարերի ձեռագիր յիշատակարաններից հաւաքուած տեղագրական վկայութիւնները, յետոյ դրանք բաղդատել Կիլիկիայի տուեալ միջավայրի տեղագրութեանը եւ գտնել Մաշկեւոր վանքի բուն տեղը:

Վերոյիշեալ յիշատակարաններից յայտնի է, որ Մաշկեւոր վանքը գտնուում էր Սիս մայրաքաղաքի շրջակայքում Տաւրոս լեռների մէջ, այսինքն՝ Սսի հիւսիսի կիսաշրջանակում: 1279 թ. Շմաւոն գրչի գրած վերոյիշեալ յիշատակարանը պարունակում է Մաշկեւորի տեղադրութեան համար լրացուցիչ նոր տեղեկութիւններ. «... զլուսաւոր զմաքրափայլ Աւետարանս 'ի Փոսնահանգ գաւառս Կիլիկեցոյ, 'ի կաթողիկոսանիստ միաբանիս 'ի վանս Մաշկաւոր կոչեցեալ, մերձ առ գերամաքուր սուրբ ուխտ[ս] որ Դրազարկ յորջորջի, 'ի Հայրապետութեան տեառն Յակոբայ, եւ թագաւորութեան Լեւոնի 'ի թուականութեանս Հայկազեանս ՉԻԸ (1279)»¹²: Սրա՝ «'ի վանս Մաշկաւոր կոչեցեալ, մերձ առ գերամաքուր սուրբ ուխտ[ս], որ Դրազարկ յորջորջի» բացատրութիւնից պարզ յայտնի է, որ Մաշկեւոր եւ Դրազարկ վանքերը եղել են իրար մօտ եւ ԺԳ դարում Կիլիկիայի Հայկական պետութեան Փոսնահանգ կոչուող գաւառում:

11 F. N. Finck und L. Gjandschezian, Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek, Tübingen, 1907, S. 237, N 11.
12 ՄՄ ձեռ. թիւ 6273. Յ. Փիրղալէմեան, Նշխարք պատմութեան հայոց, էջ 76-77

8 Ա. Չամչեան, Հայոց պատմութիւն, հտ. Գ, էջ 309
9 Նոյն տեղում, էջ 341
10 Ղ. Ալիշան, Սիսուան, Վեմետիկ-Ս. Ղազար, էջ 62

Յիրաւի, Կոզան (Սիս) քաղաքի հիւսիսային կողմում՝ Գէօկ-սու (Gök-su) գետի մօտ եւ Դրազարկ վանքի արեւմտեան կողմում, մի աւերուած Հայկական վանք կայ: Դա վերջին դարերի բնիկ ռամկի կողմից անուանուած էր Տէշտի-վարի վանք: Սրա արեւելեան կողմն է Իւչ-բէյ դաղը (Մժ bey daği) լեռը, որի անունից էլ սերել էր Դրազարկ գիւղի եւ վանքի անունը: Բանասէր Մ. Քելէշեանը, Տէշտիվար վանքի՝ հնում Հայերի կողմից ինչպէս կոչուելը առանց գիտենալու, մանրամասնօրէն նկարագրում ու որոշում է Կիլիկիայի Հայոց միջնադարեան Մաշկեւոր վանքի դիրքը: Իսկ նա կարծել է, թէ Լեռնային Կիլիկիայի Մենթեշէ (Menteshe - Հայոց Մանթէշու) գիւղում էր գտնուում Մաշկեւոր վանքը¹³, որը անհիմն ենթադրութիւն է:

Վերջին դարերում Տէշտիվար կոչուող աւերուած վանքի անունը ծագում է Մաշկեւորից: Այն, դարերի ընթացքում էր Մաշկեւորուելով եւ թուրքերէն վերափոխուած ընդհանրապէս ստացել է նախ Տէշտի-մաստաւորուելով՝ ստացել է նախ Տէշտի-վար, ապա Տաշտիվար (taşdivar - քարէ պատ) ձեւը: Այժմ աւերակի վերածուած վանքի շրջապատը կոչուում է Տաշտու-վար:

Մաշկեւոր վանք.
Տէշտիվար վանք.
Մ. Քելէշեանը իր ուսումնասիրութիւնները եւ ճամփորդագրական տպաւորութիւնները գրելիս նշել է հետեւեալը.
«... Իւչ պէլի կոչուած մեծ լեռը, իր Գարաճալը ամառանոցով, որուն արեւմուտքը կայ Տէշտիվար անուն վանքը, անտառներու մէջ կը գտնուին սրբազան աւերակները Թրազարկի վանքին»¹⁴:

13 Մ. Քելէշեան, Սիս-Մատեան, Պէյրութ, 1949, էջ 11
14 Նոյն տեղում, էջ 189

«Իւչ պէլի կոչուած, այսինքն ձէրէլի կողմը, այնտեղը քարքարուտ է, մի քանի հարիւր մեթր միայն հող ունի եւ զառիվայր է: Անկից վար դժուարանցանելի անտառ եւ խորունկ ձոր է, ձորին ծայրը երկու լեռան միջեւ՝ Հարթավայր մը՝ մի քանի տնուոր գիւղովը (1915 թ.): Հոն է Տէշտիվարը: ... Պատմականօրէն այս վայրը ուսումնական կենդրոն մ'էր անցեալում»¹⁵:

Մ. Քելէշեանը կարծել է, թէ Տէշտիվար տեղանունը ծագել է դաշտավայր բառից, որը սխալ ենթադրութիւն է: Նա նաեւ տեղեկութիւն է տալիս նոյն տեղում ժայռի ստորոտից գտնուած գանձի մասին: Դա հարստացրել էր գտնողներին: Այդ գանձը, հաւանաբար, Մաշկեւոր վանքի գործուն (ԺԲ-ԺԴ դդ.) ժամանակից թաքցուած հարստութիւններից էր:

Մաշկեւորի տեղագրութեան մասին տրուած վերոյիշեալ բոլոր տուեալներից ստացուած է, որ վանքը գտնուում էր արդի Կոզան (Kozan, Սիս) գիւղաքաղաքի հիւսիսարեւմտեան կողմում՝ ուղիղ չափումով մօտաւորապէս 28 կմ հեռու, Իւչ-բէյ դաղ եւ Կարլնջալը թեփէ (Karıncalı tepe) լեռների արեւմտեան կողմում, Կալամակ թեփէ (Kalamak tepe), Մուրատլը (Muratlı) եւ Վեկերնալը (Vekernalı) աւանների կազմած, ձորերով կտրատուած լեռնային փոքր միջավայրում ու Գէօկ-սու գետի կազմած կիսաշրջանակում:

Մաշկեւոր վանքի գործունէութեան մասին մեզ հասած գրաւոր ամենավերջին տեղեկութիւններից մէկը կրում է 1325 թուականը: Այդ թուականին Մաշկեւոր վանքում գրուած է մի ձեռագիր մատեան, որը ժամանակակից է Կոստանդին Չորրորդ Դրազարկեցու (կամ Լամբ-

15 Նոյն տեղում, էջ 190

րոնացու՝ 1323-1326 թթ.) կաթողիկոսութեանը, այժմ գտնուում է Գերմանիայում՝ Միլենի քաղաքի արքունի մատենադարանում¹⁶:


Միջնադարեան Կիլիկիայի Մաշկե-
լոր վանքի անուան արմատն է Հայերէն
մաշկ բառը, որը նշանակում է կաշի,
մորթ, իսկ մաշկետր՝ մաշկեղէն հագած:
Վանքի անունը սերտ կապ ունի վանքի
հովանաւոր Ս. Կարապետի մաշկեղէն գո-
տու աւանդութեան հետ, որը նրա
խորհրդանիշերից մէկն էր: Ըստ եկեղե-
ցական՝ աւանդութեան՝ սուրբ Կարապե-
տը հանդերձաւորուում էր «անշուք եւ ան-
ընդել տարազու, հանդերձ զգեցեալ ՚ի
ստեւոյ ուղտու՝ իբրեւ խարազնագգեաց
ճգնաւոր եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ ա-
ծեալ...»¹⁷:

ԺՐ դարի Հայոց մէջ եղել է նաեւ
Մաշկեւոր անձնանուն: Սմբատը իր Ժա-
մանակագրութիւնում 1114 թ. աւերիչ
երկրաշարժի մասին գրելիս, որը կործա-
նել էր Եփրատացւոց երկիրը, Հիւսիսա-
յին Ասորիքը եւ Կիլիկիայի մի որոշ մա-
սը, նշում է. «Սոյնպէս եւ ՚ի Յիսուանցն
զամենայն դասս կրօնաւորացն եսպան
եւ մեծ վարդապետն Մաշկեւորն կատա-
րեցաւ ՚ի Վարդկուն»¹⁸:

Կրօնական, վարչական եւ խոշոր
մշակութային կենտրոն լինելուց բացի՝
Մաշկեւոր վանքը եղել է նաեւ բարձրա-
գոյն ուսումնական հաստատութիւն:
Այնտեղ սովորում էին պետութեան ա-
ւագանու որդիները: Այնտեղ ուսուցա-

նում էին, կրօնագիտութիւնից բացի,
նաեւ օտար լեզուներ, ռազմավարու-
թիւն, զինավարժութիւն, դիւանագիտու-
թիւն, պատմութիւն, հռետորութիւն, օ-
րէնսգիտութիւն, նիստուկաց, քաղաքա-
վարութիւն եւ այն ամէնը, ինչ պէտք էր
լինելու պետական բարձր պաշտօններ
զբաղեցնելիս: Կիլիկիայի Հայկական պե-
տութեան դիւանագիտական գիտելիքնե-
րի ուսումնարանը գտնուում էր լեռներով
եւ ձորերով կտրատուած, աչքից հեռու
Մաշկեւոր վանքում: Այնտեղի ուսանող-
ները լինում էին թագաւորների, իշխան-
ների, դեսպանների, նախարարների, քա-
ղաքապետների եւ նման պաշտօնատար-
ների որդիները, որ մեծացել էին Համա-
պատասխան եւ ուրոյն միջավայրում:
Նրանք վարժ էին ազնուականների նիս-
տուկացին, դիմելու ոճին, խօսելակեր-
պին, մտածելակերպին եւ ապրելակեր-
պին: Այդ հանգամանքի բերումով Մաշ-
կեւորի վանականների մի մասը լինում
էին ծերացած զինուորականներ, դես-
պաններ, դիւանագէտներ, աշխարհիկ
կեանքից հրաժարուած թագաւորների,
իշխանների եղբայրներ եւ հարազատ-
ներ:

16 Գ. վրդ. Գալէմբեարեան, Յուցակ հայերէն
ձեռագրաց արքունի մատենադարանին ՚ի
Միւնխէն, Վիեննա, 1892, էջ 29
17 Մ. Աւգերեան, Լիակատար վարք սրբոց, հտ.
Ա, Վենետիկ-Ս. Ղազար, էջ 20
18 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ-
Ս. Ղազար, 1956, էջ 143: Այսպէս Յիսուանց
անապատի բոլոր կրօնատրոնները սպան-
նուեցան, եւ Մաշկեւոր մեծ վարդապետը
վախճանուեց վարդկու վանքում:



ԼԵՈՒԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՀԱՏՈՒԱԾԸ
Չափեր 1:500000
Քարտեզի հեղինակ Մ. Ն. Ծեվաֆիբեան